

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

12.11.2012թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ա.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Յու. Պողոսյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ռ. Շաբոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կոյունջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Թոխաթյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի առաջատար մասնագետ Կ. Ավետիսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «2013 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների

կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Հաստատել 2013 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թվականին իրականացված աշխատուժի միանվագ հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազայից Ֆրանկֆուրտի Գյոթեի համալսարանին միկրոտվյալներ տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ Ֆրանկֆուրտի Գյոթեի համալսարանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թվականին իրականացված աշխատուժի միանվագ հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազայից միկրոտվյալներ՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի արդյունքների ստացման ու հրապարակման համար նախատեսված ելքային աղյուսակների (թվով 72) ցանկը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Գևորգյան/

Որոշվեց՝

Թույլ տալ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի արդյունքների ստացման և հրապարակման համար կիրառել թվով 72 ելքային աղյուսակների ցանկը ըստ կից ներկայացվող ցուցակի:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

/Անհատական/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2012 թվականի օգոստոսի 6-ից 24-ը Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) Վիեննայի Միացյալ Ինստիտուտի կողմից կազմակերպված «Դրամավարկային և ֆինանսների վիճակագրություն» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Տիփիզյան/

4.2. Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2012 թվականի սեպտեմբերի 25-ից 26-ը Ինոգեյթ ծրագրի տեխնիկական քարտուղարության կողմից կազմակերպված «Ինոգեյթ ծրագրի էներգետիկ վիճակագրության ցանցի մասին» խորագրով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Հակոբյան/

4.3. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2012 թվականի սեպտեմբերի 27-ից 28-ը «Արժանապատիվ աշխատանքի ապահովման գործում առաջընթացի մշտադիտարկում և գնահատում» ծրագրի «Ազգային մակարդակով արժանապատիվ աշխատանքի ցուցանիշների մշակման և վերլուծության հնարավորությունների ընդլայնումը» բաղադրիչի շրջանակում «Արժանապատիվ աշխատանքի չափումը և մշտադիտարկումը» խորագրով տարածաշրջանային խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

4.4. Հաղորդում՝ Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրան քաղաքում 2012 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 3-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված «Վիճակագրական որակի կառավարում և պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ» խորագրով տարածաշրջանային 5-րդ աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ռ. Շաբոյան/

4.5. Հաղորդում՝ Ալբանիայի Տիրանա քաղաքում 2012 թվականի հոկտեմբերի 1-ից 5-ը միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի գործողությունների ազգային ծրագրի իրականացման և մոնիտորինգի հարցերով Ալբանիայի փորձին ծանոթանալու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Կ. Կոյումջյան/

4.6. Հաղորդում՝ Թայլանդի Բանգկոկ քաղաքում 2012 թվականի հոկտեմբերի 10-ից 11-ը «Դեպի ներառական զարգացում. կանանց և տղամարդկանց համար արդարացի զարգացման արդյունքների պլանավորումը Կենտրոնական ու Արևմտյան Ասիայում և Կովկասում» խորագրով տարածաշրջանային համաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Լ. Քալանթարյան/

4.7. Հաղորդում՝ Ղրղզստանի Բիշքեկ քաղաքում 2012 թվականի հոկտեմբերի 11-ից 12-ը Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կազմակերպված «Բնակչության բնական շարժի վիճակագրության և քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) վերաբերյալ» վերլուծական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ա. Թոխաթյան/

4.8. Հաղորդում՝ Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում 2012 թվականի հոկտեմբերի 15-ից 19-ը 2011թ. ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում Հայաստան-Վրաստան երկկողմանի համադրումների աշխատանքների իրականացման համար Թբիլիսիում 2012թ. հոկտեմբերի 14-ից-19-ը կազմակերպված աշխատանքային քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցողներ՝ Գ. Մարտիրոսյան, Մ. Երիցյան, Կ. Ավետիսյան/

4.9. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2012 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 2-ը ՄԱԿ-ի ԵՏՀ Եվրոպայի շրջակա միջավայրի գործակալության և վիճակագրական ծառայության կողմից համատեղ կազմակերպած կայուն զարգացման և էկոլոգիական գործոնի գնահատմանն ու չափմանը նվիրված երկրորդ սեմինարին, էկոլոգիական ցուցանիշների ձևավորման միասնական նպատակային խմբի վեցերորդ նիստին և շրջակա միջավայրի մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խմբի տասներեքերորդ նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Յու. Պողոսյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

5. Այլ հարցեր

5.1. «ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ոչ պիտանի գույքի տնօրինման մասին» հարցը:

/Ջեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշվեց՝

Թույլատրել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պահեստում առկա օգտագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցների ցանկից գնահատված արժեք ունեցող ապրանքների համար սկսել գույքի օտարման գործընթաց (հավելված 1) և օգտագործման համար ոչ պիտանի զրո դրամ գնահատված հիմնական միջոցները, փոքրարժեք և արագամաշ առարկաներն ամբողջությամբ հանձնել աղբավայր (հավելված 2-4):

5.2. «ՀՀ ԱՎԾ կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ջեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկին տրամադրել ՀՀ ԱՎԾ կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան:

5.3. «ՀՀ արտաքին առևտրով զբաղվող կազմակերպությունների միանվագ դիտարկման հարցաթերթը և դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Ջեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշվեց՝

Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում արտաքին առևտրով զբաղվող կազմակերպությունների հարցում» միանվագ դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի:

/Անհատական/

10.12.2012թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Յու.Պողոսյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի բաժնի պետ Լ. Հարությունյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը», «Իրավաբանական անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգը» և «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը», «Անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգը» հաստատելու, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2003թ. մարտի 14-ի թիվ 04-Ն և 05-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

Որոշվեց՝

Հաստատել «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը», «Անհատ ձեռնարկատերերի

վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և դրանց լրացման կարգի մասին հրահանգները համաձայն հավելվածների, իսկ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2003թ. մարտի 14-ի թիվ 04-Ն և 05-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչել:

/Նորմատիվ/

25.12.2012թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ա.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Յու. Պողոսյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումժյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի 1-ին կարգի մասնագետ Կ.Եսայանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Մ.Ծատուրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի վիճակագիր Ե. Գևորգյանը:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. «2013 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշվեց՝

Հաստատել «2013 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը » համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանագրքոված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքոված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև Պ-1/հ (ամսական, տարեկան), Ձև Պ-2/հ (ամսական, տարեկան), Ձև Պ-3/հ (եռամսյակային, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին ու լրացման հրահանգներին և Ձև Պ-4/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու և Հայաստանի

Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թ. հոկտեմբերի 12-ի թիվ 33-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշվեց՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև Պ-1/հ (ամսական, տարեկան), Ձև Պ-2/հ (ամսական, տարեկան), Ձև Պ-3/հ (եռամսյակային, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին ու լրացման հրահանգներին և Ձև Պ-4/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թ. հոկտեմբերի 12-ի թիվ 33-Ա որոշումը:

/Անհատական/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2012 թվականի հոկտեմբերի 11-ից 12-ը ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի հրավերով TRANSMONEE ծրագրի շրջանակում անդամ-երկրների համակարգողների հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Պեղրոսյան/

4.2. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2012 թվականի հոկտեմբերի 16-ից 19-ը «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով Եվրոստատի և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի փորձագետների խմբի համատեղ աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/

4.3. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2012 թվականի հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 2-ը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակում, Արժույթի միջազգային հիմնադրամի ինստիտուտի հրավերով, «Ազգային հաշիվների վիճակագրություն» ԱՀՀ 2008-ի ներդրման համատեքստում թեմայով ուսուցողական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ Լ. Պեղրոսյան, Լ. Խաչատրյան/

4.4. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2012 թվականի նոյեմբերի 2-ին «ԵՄ շարժունակության շուրջ գործընկերության՝ Հայաստանի և Վրաստանի փորձը» պանելային քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Կ. Կոյումջյան/

4.5. Հաղորդում՝ Հնդկաստանի Նյու Դելի քաղաքում 2012 թվականի նոյեմբերի 5-ից 8-ը «Ավալոն տեղեկատվական համակարգ» ընկերության կողմից կազմակերպված «Ընդլայնված Դեվինֆո» դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցողներ՝ Ա. Մարտիրոսյան, Կ. Եսայան /

4.6. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2012 թվականի նոյեմբերի 5-ից 9-ը «Ինոգեյթ» ծրագրի շրջանակում էներգետիկայի Միջազգային գործակալության կողմից կազմակերպված «էներգետիկ վիճակագրություն» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Հ. Հակոբյան/

4.7. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2012 թվականի նոյեմբերի 6-ից 8-ը Մոլդովայի վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնախնդիրները» խորագրով այցելությանը մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Գ. Անանյան, Ա. Ավագյան, Ա. Սաֆյան/

4.8. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2012 թվականի նոյեմբերի 19-ից 20-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Կլիմայի փոփոխությանը վերաբերող վիճակագրություն արտադրողների և սպառողների համար» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ա. Սաֆյան/

4.9. Հաղորդում՝ Թուրքիայի Անթալիա քաղաքում 2012 թվականի նոյեմբերի 20-ից 22-ը Եվրոպական բնապահպանական գործակալության, Թուրքիայի անտառային տնտեսության գլխավոր տնօրինության, Թուրքիայի բնապահպանության և ուրբանիզացիայի նախարարության կողմից կազմակերպված «Թուրքիայում, Արևմտյան Բալկանների և Կովկասյան երկրների բնական կապիտալի հաշվառում և էկոհամակարգերի ծառայությունների գնահատում» սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

4.10. Հաղորդում՝ Ալբանիայի Տիրանա քաղաքում 2012 թվականի նոյեմբերի 21-ից 23-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Կրթության ոլորտում Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) ցուցանիշների վերաբերյալ» տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Մ. Ծափուրյան/

4.11. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2012 թվականի նոյեմբերի 21-ից 22-ը Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության կողմից կազմակերպված «Եվրոպական հարևանության և համագործակցության գործիք – էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգ» ծրագրի ղեկավար կոմիտեի նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող Յու. Պողոսյան/

4.12. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2012 թվականի նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը Եվրամիության կողմից կազմակերպված «Ժառանգաբար փոխանցվող արհեստները՝ զարգացման ընդհանուր հարթակ» ծրագրի շրջանակներում համատեղ տարածաշրջանային միջոցառումներ: Կլոր սեղան՝ «Մշակույթի ստեղծագործական արտադրությունների բնագավառում երկրի քաղաքականությունը» և սեմինար-քննարկումներ՝ «Մշակութային վիճակագրական գործիքները, միջազգային ստանդարտները և տեղական առանձնահատկությունները» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ե. Գևորգյան/

4.13. Հաղորդում՝ Լյուքսեմբուրգ քաղաքում 2012 թվականի դեկտեմբերի 11-ին Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված վիճակագրական համագործակցության համար ԵՀՔ-Արևելքի Ռազմավարության համար աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Սաֆյան/

4.14. Հաղորդում՝ Թայլանդի Բանգկոկ քաղաքում 2012 թվականի դեկտեմբերի 10-ից 11-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղ Օվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի վիճակագրական դեպարտամենտի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կազմակերպված «Ասիայում և Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանի երկրներում քաղաքացիական

կացության գրանցումների համակարգի և բնական շարժի վիճակագրական տվյալների բարելավման հարցերին նվիրված բարձր մակարդակի հանդիպմանը» մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Կ. Կոյումջյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

5. Այլ հարցեր

5.1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» հարցը:

/Ջեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշվեց՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը համաձայն հավելված 1-ի:

5.2. «Հայաստանի ազգային հաշիվների ցուցանիշների վերանայման քաղաքականության և վերանայման ժամանակացույցի հաստատման մասին» հարցը:

/Ջեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշվեց՝

Հաստատել «Հայաստանի ազգային հաշիվների ցուցանիշների վերանայման քաղաքականությունը և վերանայման ժամանակացույցը » համաձայն հավելված 1-ի:

/Անհատական/